



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՂՈՒ ՄԱՐԶ
ԵՂԵԳՆՈՒՄԻ ԶԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Թիվ 58
04 մարտի 2019թ.


Լոռու մարզի մարզպետ
Պարոն Ա. Ղուկասյանին

Եղեգնուտի համայնքապետարանը Ձեզ է ներկայացնում համայնքի ավագանու թիվ 2 և
3 որոշումները:

Առդիր՝ հավելվածներ:

Համայնքի ղեկավար՝

Ա. Հովհաննիսյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՂԵԳՆՈՒՄՑ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Եղեգնուտ համայնք, հասցե 3 փ. N 2
հեռախոս 6-83-37
էլ. փոստ yeghegnut.lori@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

« 28 » փետրվարի 2019 թվականի թիվ 2

ԵՂԵԳՆՈՒՄՑ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԵՎ ՋԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 82-րդ հոդվածի 7-րդ մասով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 8-րդ մասով՝

Եղեգնուտ համայնքի ավագանին որոշում է.


- Հաստատել Եղեգնուտ համայնքի 2018 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի :
- Հաստատել 2018 թվականի Եղեգնուտ համայնքի զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Աղաջանյան Գառնիկ			
Գալստյան Սեյրան			
Գրիգորյան Լիդիյա			
Կարապետյան Գրիգոր			
Պողոսյան Արթուր			



Համայնքի ղեկավար

Ս.Հովհաննիսյան
անուն ազգանուն



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՂԵԳՆՈՒՄՑ ԶԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Եղեգնուտ համայնք, հասցե 3 փ. N 2
հեռախոս 6-83-37
էլ. փոստ yeghegnut.lori@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

« 28 » փետրվարի 2019 թվականի N 3

ԵՂԵԳՆՈՒՄՑ ԶԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով՝

Եղեգնուտ համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Եղեգնուտ համայնքի 2019 թվականի տարեկան աշխատանքային պլանը:

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Աղաջանյան Գառնիկ			
Գալստյան Սեյրան			
Գրիգորյան Լիդիյա			
Կարապետյան Գրիգոր			
Պողոսյան Արթուր			



Համայնքի ղեկավար

Մ.Հովհաննիսյան
անուն ազգանուն

**ԵՂԵԳՆՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ**

Հարգելի մասնակիցներ, Ձեզ եմ ներկայացնում 2018թ.-ի տնտեսական տարում համայնքապետարանի կատարած աշխատանքների համառոտ հաշվետվությունը:

Հաշվետու տարում համայնքապետարանի կատարած աշխատանքները հիմնականում ունեցել են 2 ուղղություն. առաջինը ֆինանսական գործունեությունն է, կապված բյուջեի ձևավորման և ֆինանսական միջոցների ճիշտ տեղաբաշխմանը ըստ հոդվածների: Երկրորդ ուղղությունը համայնքի սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման հիմնահարցերն է:

2018թ.-ի համայնքապետարանի բյուջեն կազմելիս հաշվի է առնվել երկու կարևոր հանգամանք: Դա բյուջեի եկամտային և ծախսային բաժինների ֆինանսական ռեալ միջոցների բաշխումն է ըստ հոդվածների, որը և հիմք է հանդիսանում ամբողջ տարվա ընթացքում համայնքապետարանի ֆինանսական գործունեության խելամիտ և արդյունավետ կազմակերպմանը: Բյուջեն կազմելիս հիմք է հանդիսացել երկու կարևոր ֆինանսական բաղադրիչներ: Այդ բաղադրիչներից առաջինը սեփական եկամուտների հավաքագրումն է, և երկրորդը պետության կողմից հատկացվող դոտացիան: 2018թ.-ին համայնքապետարանի բյուջեն կազմել է 57075,0 (հիսուսյոթ միլիոն յոթանասունհինգ հազար դրամ) հազար դրամ, որից դոտացիա՝ 16327,0 հազար դրամ, սեփական եկամուտներ՝ 27472,0 հազար դրամ և 36 միլիոն դրամ սուբվենցիա համայնքում հանդիսությունների սրահ կառուցելու համար:

Համայնքապետարանի առաջնահերթ խնդիրներից ամենակարևորը ֆինանսական առումով հարկատեսակների հավաքագրումն է: Դա հողի հարկն է, գույքահարկը և վարձավճարների գանձումը ըստ ամիսների, եռամսյակների: Տարվա ընթացքում ըստ հարկատեսակների բյուջեով պլանավորված է եղել.

1. հողի հարկ – 1044.0 հազար դրամ, կատարման տոկոսը 90
2. գույքահարկ – 1164.0 հազար դրամ, կատարման տոկոսը 102
3. վարձավճար – 405.0 հազար դրամ, կատարման տոկոսը 114
4. տեղական տուրք – 34.0 հազար դրամ, կատարման տոկոսը 83
5. տեղական վճար – 100.0 հազար դրամ, կատարման տոկոսը 50

Այլ եկամուտ գանձվել է 350.0 հազար դրամ 'Ավագահանք' ՍՊԸ-ից:

Հարկային պարտավորությունները տարվա կտրվածքով կատարվել է 109.5%-ով:

Որպես աշխատավարձ բյուջեով հատկացվել է 12430,0 հազար դրամ, դրանից վճարվել է 11630,0 հազար դրամ: Տնտեսվել է շուրջ 800 հազար դրամ Մանկապարտեզին որպես դրամաշնորհ հատկացվել է 4352.0 հազար դրամ անձնակազմին աշխատավարձ վճարելու համար, նույնքան էլ վճարվել է: Դրամական հատկացումներ են կատարվել կապի, էներգետիկ, համակարգչային, լրատվական և այլ ծառայությունների համար: Վճարվել է նաև օգնություն ծննդի, մահվան և սոցիալապես անապահով ընտանիքներին:

1. Հուլիսի 1-ին նպաստ նախատեսվել է 180,0 հազար դրամ, վճարվել է 160,0 հազար դրամ:
2. Ծննդի խրախուսման նպաստ – 120,0 հազար դրամ, վճարվել է 105,0 հազար դրամ:
3. Սոցիալապես անապահով ընտանիքներին օգնություն – 250,0 հազար դրամ, վճարվել է 140,0 հազար դրամ:

Տարվա ընթացքում բյուջեի վարչական ծախսերից տնտեսվել է շուրջ 2 միլիոն դրամ, որը տարվա վերջում փոխանցվել է ֆոնդային բյուջե: Նշված գումարը ավագանու որոշմամբ նախատեսված է ծախսել նորակառույց հանդիսությունների սրահի կահավորման համար:

2018թ,-ին ըստ հնգամյան ծրագրի համայնքում իրականացվել է հանդիսությունների սրահի կառուցման շին.աշխատանքները: Այժմ ընթանում է այդ կառույցի ներքին հարդարման աշխատանքները: Շինարարությունը իրականացվել է ՀՀ կառավարության կողմից հատկացված 36 միլիոն սուբսիդավորման և համայնքի կողմից 9 միլիոն դրամի ներդրումով:

Հաշվետու տարում թե վարչական, և թե ֆոնդային բյուջեների հետ կապված խնդիրներ չենք ունեցել: Ֆինանսական բոլոր հարցերը համաձայնեցվել է մարզպետարանի ֆինանս-տնտեսական վարչության հետ, հաստատվել ավագանու կողմից:

Հավաքագրված հարկային եկամուտները ժամանակին մուծվել է բանկ: Ոչ համայնքապետարանի, ոչ էլ մանկապարտեզի աշխատավարձի պարտքեր չունենք: Այսքանը մեր կողմից կատարած ֆինանսական գործունեության մասին:

Այժմ ուզում եմ մի քանի խոսքով Ձեզ ներկայացնել համայնքի սոցիալական խնդիրների ուղղությամբ կատարված աշխատանքները:

Համայնքապետարանի աշխատակազմի և ավագանու նախաձեռնությամբ 2018թ,-ին որոշ աշխատանքներ են կատարվել ճանապարհների բարեկարգման, ջրագծերի վերանորոգման, աղբահանության և այլ սոցիալական և կենցաղային խնդիրների ուղղությամբ: Այդ աշխատանքներում ներգրավվել են համայնքի բնակիչները իրենց

ֆիզիկական և տեխնիկական միջոցներով առանց համայնքապետարանի ֆինանսական միջոցների ներդրման:

Հատուկ ուշադրություն է դարձվում մանկապարտեզի բնականոն գործունեության վրա: 2018թ.-ին հիմնանորոգվել է և բարելավվել շենքային պայմանները, տեղադրվել և շահագործման է հանձնվել այլընտրանքային էներգիայի օգտագործմամբ արևային ջրատաքացուցիչներ և էլ.էներգիայի սնուցման մարտկոցներ: Այժմ մանկապարտեզը ապահովված է մշտական տաք ջրով և արևային էլ.էներգիայի սնուցման ցանցով: Նշված աշխատանքների իրականացման ֆինանսական միջոցները տրամադրել են ֆրանսիահայ բարերարները, որի համար մենք երախտապարտ ենք և շնորհակալ: Դպրոցի հիմնանորոգումից հետո կարգավորվել է ջեռուցման համակարգը: Նախկին վառարանային տաքացման փոխարեն այժմ գործում է բնական գազով ջեռուցման համակարգը, որը և սանիտարական, և ֆինանսապես շահավետ է և օգտակար: Դպրոցը ունի կահավորված խոհանոց, ընտիր մարզական դահլիճ, որը նպաստում է աշակերտների ֆիզ.դաստիարակության և ուսման որակի բարձր մակարդակի ապահովումը:

Այժմ մի քանի խոսք ընթացիկ 2019թ.-ի անելիքների մասին: Համայնքապետարանի կողմից կազմված 5-ամյա ծրագրով նախատեսված է ամեն տարի կատարել ճանապարհների, ջրագծերի վերանորոգման, աղբահանության և այլ սոցիալ-տնտեսական խնդիրների լուծմանն ուղղված աշխատանքներ: Այս տարի բացի նշված խնդիրներից նախատեսված է նաև գիշերային լուսավորության ապահովման հարցը: Ինչպես վերը նշեցինք 2018թ.-ին համայնքում իրականացվել է ժամանցի և հանդիսությունների սրահի կառուցման աշխատանքները: Այժմ խնդիր ունենք սրահի կահավորման և այն շահագործման հանձնելու առումով, որը բավականին ծախսատար է: Այդ իսկ պատճառով բյուջեի տնտեսված ֆինանսական միջոցները առաջին հերթին ուղղելու ենք այդ խնդրի լուծմանը: Հույս ունենք, որ տարվա երկրորդ կեսին կկարողանանք նաև անդրադառնալ վերը նշված մնացած խնդիրներին: Փորձելու ենք ֆինանսներ հայթայթելու հարցով ներգրավել նաև բարերարների և եթե հնարավոր է իրականացնել որևէ ծրագիր համայնքային ներդրումով:

Համայնքապետարանի աշխատակազմը ներկայումս ապահովված է համակարգչային ծառայության ամենաանհրաժեշտ միջոցներով: Աշխատակազմը սերտ աշխատանքային համագործակցության մեջ է մարզի բոլոր տարածքային ծառայությունների հետ: Առաջին հերթին մարզպետարանի, նրա վարչությունների և բաժինների, ոստիկանության, զինկոմիսարիատի, արտակարգ իրավիճակների, սոցիալական ծառայության, համաճարակային կենտրոնի և այլ ծառայությունների հետ:

Համայնքապետարանի աշխատակազմը միշտ էլ ուշադիր է բնակչության կողմից տրվող դիմումների և բողոքների նկատմամբ: Դրանք ժամանակին քննարկվում են և տրվում համապատասխան լուծում կամ որոշում: 2018թ.-ին ունեցել ենք համայնքի ղեկավարի 35 որոշում, 76 կարգադրություն, ավագանու 11 նիստ, 25 որոշում: Ավագանին

միշտ ակտիվ է եղել համայնքի առջև դրված խնդիրների քննարկման, դրանց առաջնահերթության որոշման, ճիշտ ու ժամանակին լուծման գործում:

2018թ.-ին համայնքում գրանցվել է 7 ծնունդ, 16 մահ:

Ցավով պետք է նշեմ, որ համայնքում մեծ թիվ է կազմում արտագաղթը: Եթե նախկինում երիտասարդությունը մեկնում էր արտերկիր ժամանակավորապես, այժմ նկատվում է արտագաղթ ընտանիքներով: Համայնքից ներկայումս բացակայում է 16 ընտանիք: Մարած ծխերի թիվը կազմում է 37 ընտանիք:

Սրանով վերջացնում եմ Ձեզ ներկայացվող հաշվետվությունս, իսկ Ձեր մասնակցության համար հայտնում իմ խորին շնորհակալությունը:

Համայնքի ղեկավար՝

Մ.Հովհաննիսյան

**ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԵՂԵԳՆՈՒՏ ՀԱՄԱՅՆՔ**

Համայնքի 2019 թվականի

ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

Կազմել է՝ համայնքի ղեկավար Միշա Հովհաննիսյանը

Հաստատվել է՝ համայնքի ավագանու փետրվարի 28 -ի թիվ 03 որոշմամբ
(նիստի ամսաթիվը)

Եղեգնուտ 2019թ.

Բովանդակություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ -----	3
1. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՍԼԱԿԱՆԸ և ՈԼՈՐՏԱՅԻՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ -----	3
2. ՀԱՄԱՅՆՔԻ 2018Թ. ԾՐԱԳՐԵՐԻ ՑԱՆԿԸ և ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ՀԵՆՔԵՐԸ (ԸՍՏ ՈԼՈՐՏՆԵՐԻ) -----	6
3. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ 2018Թ. ԾՐԱԳԻՐԸ -----	11
4. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՊ-Ի ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՊԼԱՆԸ -----	12
5. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՊ-Ի ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ և ԳՆԱՀԱՏՄԱՆ ՊԼԱՆԸ -----	13

Ներածություն

Եղեգնուտ համայնքի 2019 թվականի տարեկան աշխատանքային պլանի (ՏԱՊ-ի) մշակման հիմնական նպատակն է՝ ապահովել համայնքի ավագանու կողմից հաստատված համայնքի հնգամյա զարգացման ծրագրով (ՀՀԶԾ-ով) սահմանված համայնքի տեսլականի, ռազմավարության, ոլորտային նպատակների և ծրագրերի իրագործումը:

ՏԱՊ – ի մշակման մեթոդական հիմք է հանդիսացել «Համայնքների ֆինանսիստների միավորում» ՀԿ-ի փորձագետների կողմից 2017 թվականին պատրաստված «Համայնքի տարեկան աշխատանքային պլանի մշակման» մեթոդական ուղեցույցը:

ՏԱՊ-ի 1-ին բաժնում ներկայացված են համայնքի տեսլականը, համայնքի կայուն զարգացման ցուցանիշները (**Աղյուսակ 1**), ոլորտային նպատակները (**Աղյուսակ 2**):

ՏԱՊ-ի 2-րդ բաժնում բերված են համայնքի 2019 թվականի համապատասխան ֆինանսական միջոցներով ապահովված ծրագրերը (**Աղյուսակ 3**) և այդ ծրագրերի տրամաբանական հենքերը՝ ըստ համայնքի ղեկավարի լիազորությունների ոլորտների (**Աղյուսակ 5**), ինչպես նաև այն ծրագրերը, որոնք դեռևս ապահովված չեն համապատասխան ֆինանսական միջոցներով (**Աղյուսակ 4**):

ՏԱՊ-ի 3-րդ բաժնում ներկայացված է՝ համայնքի սեփականություն հանդիսացող գույքի կառավարման 2019 թվականի ծրագիրը (**Աղյուսակ 6**):

ՏԱՊ-ի 4-րդ բաժնում բերված է ՏԱՊ-ի ֆինանսավորման պլանը՝ ըստ համայնքի ղեկավարի լիազորությունների ոլորտների (**Աղյուսակ 7**):

ՏԱՊ-ի 5-րդ բաժնում (Աղյուսակ 8) ներկայացված է՝ տեղեկատվություն ՏԱՊ-ում ներառված յուրաքանչյուր ոլորտային ծրագրի իրականացման արդյունքային ցուցանիշների մոնիթորինգի և գնահատման վերաբերյալ:

1. Համայնքի տեսլականը և ոլորտային նպատակները

Ստորև ներկայացված են համայնքի կայուն զարգացման ցուցանիշները: Ցուցանիշի ելակետային արժեքը՝ համապատասխան ցուցանիշի արժեքն է 2019 թվականի հունվարի 1-ի դրությամբ: Ցուցանիշի թիրախային արժեքը՝ համապատասխան ցուցանիշի պլանավորվող արժեքն է, այսինքն՝ այն արժեքը, որին կհասնի համայնքը 2019 թվականին ՏԱՊ-ը հաջողությամբ իրականացնելու դեպքում:

Աղյուսակ 1. Համայնքի կայուն զարգացման ցուցանիշները

Ցուցանիշ	Ելակետային արժեք	Թիրախային արժեք
Աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների թվի տեսակարար կշիռը համայնքի ընտանիքների ընդհանուր թվի մեջ (%)	30	25
Համայնքում հաշվառված բնակիչների ընդհանուր թիվը (մարդ)	805	805

Ստորև սահմանված են համայնքի ոլորտային նպատակները՝ ըստ համայնքի ղեկավարի լիազորությունների առանձին բնագավառների (ոլորտների):

Աղյուսակ 2. Համայնքի ոլորտային նպատակները

Ոլորտային նպատակ	Վերջնական արդյունքի՝		
	Ցուցանիշ	Ելակետային արժեք	Թիրախային արժեք
Ոլորտ 1. Ընդհանուր			
2019 թվականի ընթացքում ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել:	-	-	-
Ոլորտ 2. Պաշտպանության կազմակերպում			
2019 թվականի ընթացքում ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել:	-	-	-
Ոլորտ 3.Արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանություն և քաղաքացիական պաշտպանության կազմակերպում			
2019 թվականի ընթացքում ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել:	-	-	-
Ոլորտ 4. Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն			
	Համայնքի փողոցներում լուսավորության կետերի անցկացում	0 կետ	10 կետ
Բարելավել քաղաքաշինության և կոմունալ ծառայության բնագավառում համայնքի բնակչությանը հանրային ծառայությունների մատուցումը և որակը:	Համայնքում գազամատակարարման ցանցի ընդլայնում	3 կմ	3.5 կմ
	Համայնքում հանդիսությունների սրահի կահավորում		1
Ոլորտ 5. Հողօգտագործում			
2019 թվականի ընթացքում ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել:	-	-	-
Ոլորտ 6. Տրանսպորտ			
2019 թվականի ընթացքում ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել:	-	-	-
Ոլորտ 7. Առևտուր և ծառայություններ			
2019 թվականի ընթացքում ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել:			

Ոլորտ 8. Կրթություն			
2019 թվականի ընթացքում ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել:			
Ոլորտ 9. Մշակույթ և երիտասարդության հետ տարվող աշխատանքներ			
2019 թվականի ընթացքում ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել:	-	-	-
Ոլորտ 10. Առողջապահություն			
2019 թվականի ընթացքում ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել:	-	-	-
Ոլորտ 11. Ֆիզիկական կուլտուրա և սպորտ			
2019 թվականի ընթացքում ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել:	-	-	-
Ոլորտ 12. Սոցիալական պաշտպանություն			
Ապահովել սոցիալապես անապահով ընտանիքներին տրամադրվող սոցիալական աջակցության հասցեականությունը և մատչելիությունը:	Սոցիալական ծրագրի առկայությունը, այո/ոչ	այո	այո
	Սոցիալական ծրագրի շահառուների բավարարվածությունը իրականացվող ծրագրից	ավելի շատ վատ, քան լավ	միջին՝ ոչ լավ, ոչ վատ
Ոլորտ 13. Գյուղատնտեսություն			
2019 թվականի ընթացքում ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել:	-	-	-
Ոլորտ 14. Անասնաբուծություն և բուսասանիտարիա			
2019 թվականի ընթացքում ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել:	-	-	-
Ոլորտ 15. Շրջակա միջավայրի պահպանություն			
Ապահովել համայնքի բոլոր բնակավայրերում բնակչությանը աղբահանության և սանիտարական մաքրման որակյալ և մատչելի ծառայությունների մատուցումը և շրջակա միջավայրի մաքրությունը:	Համայնքի բնակիչների բավարարվածությունը մատուցված աղբահանության և սանիտարական մաքրման ծառայություններից (հարցումների հիման	միջին՝ ոչ լավ, ոչ վատ	ավելի շատ լավ, քան վատ

	վրա)		
	Տեղափոխված աղբի ծավալը, տոննա	0.0	5.0
Ոլորտ 16. Զբոսաշրջություն			
2019 թվականի ընթացքում ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել:	-	-	-
Ոլորտ 17. Տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցություն			
2019 թվականի ընթացքում ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել:	-	-	-

2. Համայնքի 2019 թ. ծրագրերի ցանկը և տրամաբանական հենքերը (ըստ ոլորտների)

Ստորև ներկայացված են ՏԱՊ-ի այն ծրագրերը, որոնք ապահովված են համապատասխան ֆինանսական միջոցներով:

Աղյուսակ 3. ՏԱՊ-ի ծրագրերը, որոնք ապահովված են համապատասխան ֆինանսական միջոցներով

Հ/հ	Ծրագրի անվանումը	Ծրագրի արժեքը (հազ. դրամ)	Բնակավայր(եր)ը
Ոլորտ 4.Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն			
1.	Համայնքում գազամատակարարման ցանցի ընդլայնում	700.0	գ. Եղեգնուտ
2.	Համայնքի փողոցներում լուսավորության կետերի անցկացում	2706.3	գ. Եղեգնուտ
3.	Համայնքում հանդիսությունների սրահի կահավորում	950.0	գ. Եղեգնուտ
Ընդամենը		4356.3	
Ոլորտ 12.Սոցիալական պաշտպանություն			
1.	Աջակցություն սոցիալապես անապահով ընտանիքներին	250.0	գ. Եղեգնուտ
Ընդամենը		250.0	գ. Եղեգնուտ
Ոլորտ 15.Շրջակա միջավայրի պահպանություն			
1.	Համայնքում աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների մատուցում	300.0	գ. Եղեգնուտ
Ընդամենը		300.0	
Ընդհանուրը		4906.3	

Ստորև ներկայացված են ՏԱՊ-ի այն ծրագրերը, որոնք ապահովված չեն համապատասխան ֆինանսական միջոցներով:

Աղյուսակ 4. ՏԱՊ-ի ծրագրերը, որոնք ապահովված չեն համապատասխան ֆինանսական միջոցներով

Հ/հ	Ծրագրի անվանումը	Ծրագրի արժեքը (հազ. դրամ)	Բնակավայր(եր)ը
2019 թվականի ընթացքում չեն նախատեսվում այնպիսի ծրագրեր և միջոցառումներ, որոնք ապահովված չեն համապատասխան ֆինանսական միջոցներով:			
Ընդամենը			
Ընդհանուրը			

Ստորև ներկայացված են ՏԱՊ-ով նախատեսված ծրագրերի տրամաբանական հենքերը՝ ըստ համայնքի ղեկավարի լիազորությունների ոլորտների:

Աղյուսակ 5. ՏԱՊ-ով նախատեսված ծրագրերի տրամաբանական հենքերը՝ ըստ համայնքի ղեկավարի լիազորությունների ոլորտների

Ամփոփ նկարագիր	Արդյունքային ցուցանիշներ	Տեղեկատվության աղբյուրներ	Պատասխանատու	Ժամկետ	Ռիսկեր
Ոլորտ 4. Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն					
Ոլորտային նպատակ. Բարելավել քաղաքաշինության և կոմունալ ծառայության բնագավառում համայնքի բնակչությանը հանրային ծառայությունների մատուցումը և որակը:		Ոլորտի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ. 1. Համայնքում գազամատակարարման ցանցի ընդլայնում 2. Համայնքում հանդիսությունների սրահի կառուցում			
Ծրագիր 1. Եղեգնուտ համայնքում գազամատակարարման ցանցի ընդլայնում					
Ծրագրի նպատակ. Բարելավել Եղեգնուտ համայնքի բնակչության կենցաղային պայմանները	Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ . Եղեգնուտ համայնքի բնակչության կենցաղային պայմանները բարելավվել են	Ծրագրի գնահատման համակարգ . ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ	Համայնքի ղեկավար	2019թ. մարտ – 2019թ. հոկտեմբեր	Համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների անբավարարություն
Միջանկյալ արդյունք 1. Բարելավվել է Եղեգնուտ համայնքի բնակչության կենցաղային պայմանները, բնակչության մի մասը ապահովվել է բնական գազով:	Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ) 1. Բնական գազով ապահովվել է շուրջ 33 տնտեսություն 2. Բնակիչների կարծիքը գազամատակարարման վերաբերյալ – բավականին լավ 3. Ծրագրի իրականացման ժամկետը - 8 ամիս	Տեղեկատվական աղբյուրներ Ծրագրի գնահատման համակարգ, աշխատակազմ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ, բնակիչներ	Համայնքի ղեկավար	2019թ. մարտ – 2019թ. հոկտեմբեր	Համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների առկա են եղել
Միջոցառումներ (գործողություններ) 1. Գազատար խողովակի անցկացման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի պատվիրում և		Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ) 1. Համայնքի բյուջեից նախատեսված գազատար խողովակի անցկացման ծախսեր՝ 700.0 հազ. դրամ			

<p>նախապատրաստում 2. Գազատար խողովակի անցկացման աշխատանքների իրականացում և վերահսկում 3. Աշխատանքների կատարման ավարտական ակտի կազմում, քննարկում և հաստատում</p>	<p>3. Նախագծա-նախահաշվային փաստաթղթեր՝ 1 Ֆինանսավորման աղբյուրը՝ համայնքի բյուջեի միջոցներ</p>
--	---

Ծրագիր 2. Համայնքի փողոցներում լուսավորության կետերի անցկացում

<p>Ծրագրի նպատակ. Բարելավել համայնքի բնակչության կենսամակարդակը</p>	<p>Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ. Բարելավվել է համայնքի բնակչության կենսամակարդակը</p>	<p>Ծրագրի գնահատման համակարգ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ</p>	<p>Համայնքի ղեկավար</p>	<p>2019թ. փետրվար – 2019թ. դեկտեմբեր</p>	<p>Համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների անբավարարություն</p>
<p>Միջանկյալ արդյունք 1. Բարելավվել է համայնքի բնակչության կենսամակարդակը, համայնքի բնակչությունը ապահովվել է փողոցային լուսավորությամբ</p>	<p>Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ) 1. Լուսավոր ներհամայնքային փողոցներ 2. Բնակիչների կարծիքը լուսավոր փողոցների վերաբերյալ – լավ 3. Ծրագրի իրականացման ժամկետը – 1 տարի</p>	<p>Տեղեկատվական աղբյուրներ Ծրագրի գնահատման համակարգ, աշխատակազմ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ, բնակիչներ</p>	<p>Համայնքի ղեկավար</p>	<p>2019թ. փետրվար – 2019թ. դեկտեմբեր</p>	<p>Համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների առկայությունը</p>

<p>Միջոցառումներ (գործողություններ) 1. փողոցային լուսավորության կետերի անցկացման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի պատվիրում և նախապատրաստում 2. լուսավորության կետերի ավելացման աշխատանքների իրականացում և վերահսկում 3. Աշխատանքների կատարման ավարտական ակտի կազմում, քննարկում և հաստատում</p>	<p>Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ) 1. Համայնքի բյուջեով նախատեսված կառուցման ծախսեր՝ 2706.3 հազ. դրամ 2. Ծրագրի իրականացման հարցերով զբաղվող աշխատակազմի աշխատակիցներ՝ 2 3. Նախագծա-նախահաշվային փաստաթղթեր՝ 1 Ֆինանսավորման աղբյուրը՝ համայնքի բյուջեի միջոցներ</p>
---	---

Ծրագիր 3. Համայնքում հանդիսությունների սրահի կահավորում

<p>Ծրագրի նպատակ. Բարելավել համայնքի բնակչության կենսամակարդակը</p>	<p>Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ. Բարելավվել է համայնքի բնակչության կենսամակարդակը</p>	<p>Ծրագրի գնահատման համակարգ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ</p>	<p>Համայնքի ղեկավար</p>	<p>2019թ. փետրվար – 2019թ. դեկտեմբեր</p>	<p>Համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների անբավարարություն</p>
<p>Միջանկյալ արդյունք 1. Բարելավվել է համայնքի բնակչության կենսամակարդակը, համայնքի բնակչությունը ապահովվել է ժամանակակից կահավորված</p>	<p>Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ) 1. Կահավորված հանդիսությունների ժամանակակից սրահ 2. Բնակիչների կարծիքը հանդիսությունների սրահի վերաբերյալ – լավ 3. Ծրագրի իրականացման</p>	<p>Տեղեկատվական աղբյուրներ Ծրագրի գնահատման համակարգ, աշխատակազմ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ,</p>	<p>Համայնքի ղեկավար</p>	<p>2019թ. փետրվար – 2019թ. դեկտեմբեր</p>	<p>Համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների առկայությունը</p>

հանդիսությունների սրահով	ժամկետը – 1 տարի	բնակիչներ			
Միջոցառումներ (գործողություններ) 1. Հանդիսությունների սրահի կահավորման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի պատվիրում և նախապատրաստում 2. սրահի կահավորման աշխատանքների իրականացում և վերահսկում 3. Աշխատանքների կատարման ավարտական ակտի կազմում, քննարկում և հաստատում		Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ) 1. Համայնքի բյուջեով նախատեսված կառուցման ծախսեր՝ 950.0 հազ. դրամ 2. Ծրագրի իրականացման հարցերով զբաղվող աշխատակազմի աշխատակիցներ՝ 2 3. Նախագծա-նախահաշվային փաստաթղթեր՝ 1 Ֆինանսավորման աղբյուրը՝ համայնքի բյուջեի միջոցներ			
Ոլորտ 12.Սոցիալական պաշտպանություն					
Ոլորտային նպատակ. Ապահովել սոցիալապես անապահով ընտանիքներին տրամադրվող սոցիալական աջակցության հասցեականությունը և մատչելիությունը:		Ոլորտի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ. 1.Սոցիալական ծրագրի առկայությունը, այո/ոչ -այո 2. Սոցիալական ծրագրի շահառուների բավարարվածությունը իրականացվող ծրագրից - միջին՝ ոչ լավ, ոչ վատ			
Ծրագիր 1. Աջակցություն սոցիալապես անապահով ընտանիքներին					
Ծրագրի նպատակ. Բարելավել անապահով ընտանիքների հետ տարվող աշխատանքների որակը և հասցեականությունը	Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ. Բարելավվել է սոցիալապես անապահով ընտանիքներին տրամադրվող սոցիալական աջակցության հասցեականությունը և ծառայության մատչելիությունը - բավականին լավ	Ծրագրի գնահատման համակարգ. ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ	Համայնքի ղեկավար, աշխատակազմի քարտուղար	2019թ. հունվար – 2019թ. դեկտեմբեր	Համապատասխան ֆինանսական ռեսուրսների անբավարարություն
Միջանկյալ արդյունք 1. Բարելավվել է սոցիալապես անապահով ընտանիքներին տրամադրվող սոցիալական աջակցության հասցեականությունը	Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ) 1.Սոցիալական աջակցություն ստացած սոցիալապես խոցելի ընտանիքների թիվը - 20 2. Սոցիալական աջակցություն ստանալու դիմումների քանակը ներկայացրածների թիվը -18 3.Սոցիալական աջակցություն ստացած հաշմանդամների թիվը -2 5.Բնակչության կարծիքը սոցիալական աջակցության ծառայության մատուցման հասցեականության մասին - միջին՝ ոչ լավ, ոչ վատ 6. Ծրագրի իրականացման ժամկետը - 1 տարի	Տեղեկատվական աղբյուրներ Համայնքի ղեկավար, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ, շահառուներ	Համայնքի ղեկավար, աշխատակազմի քարտուղար	2019թ. հունվար – 2019թ. դեկտեմբեր	Համապատասխան ֆինանսական ռեսուրսները առկա են
Միջոցառումներ (գործողություններ) 1. Սոցիալական աջակցության տրամադրման կարգի ընդունում ավագանու կողմից 2. Սոցիալական աջակցության կարիք ունեցող ընտանիքների հայտնաբերում 3. Սոցիալական աջակցություն ստանալու դիմումների		Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ) 1. Համայնքի բյուջեով նախատեսված սոցիալական աջակցության տրամադրման ծախսեր՝ 250.0 հազ. դրամ, 2. Սոցիալական աջակցության հարցերով զբաղվող աշխատակիցներ - 1			

քննարկում և աջակցության տրամադրում		Ֆինանսավորման աղբյուրը՝ համայնքի բյուջեի միջոցներ			
Ոլորտ 15.Շրջակա միջավայրի պահպանություն					
Ոլորտային նպատակ. Ապահովել համայնքի բնակչության աղբահանության և սանիտարական մաքրման որակյալ և մատչելի ծառայությունների մատուցումը և շրջակա միջավայրի մաքրությունը:		Ոլորտի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ. 1. Համայնքի բնակիչների բավարարվածությունը մատուցված աղբահանության և սանիտարական մաքրման ծառայություններից – ավելի շատ լավ, քան վատ 2.Տեղափոխված աղբի ծավալը՝ 5 տոննա			
Ծրագիր 1. Համայնքում աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների մատուցում					
Ծրագրի նպատակ. Կազմակերպել համայնքի բնակչության աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների մատուցումը	Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ. Ապահովվել է համայնքի բնակչության աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների մատուցումը	Ծրագրի գնահատման համակարգ. ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ	Համայնքի ղեկավար, աշխատակազմի քարտուղար	2019թ. հունվար – 2019թ. դեկտեմբեր	Համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների անբավարարություն
Միջանկյալ արդյունք 1. Կազմակերպվել է համայնքի բնակչության աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների մատուցումը, ապահովվել է շրջակա միջավայրի մաքրությունը	Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ). 1.Աղբահանություն և սանիտարական մաքրում իրականացնող աշխատակիցների թիվը - 1 2.Աղբամանների թիվը - 5 3.Աղբահանության համար գանձվող վճարի չափը - 30 դրամ 4.Համայնքում իրականացված աղբահանության ծավալը՝ տարեկան կտրվածքով, տոննա - 5 5.Բնակիչների կարծիքը աղբահանության և սանիտարական մաքրման ծառայության վերաբերյալ - միջին՝ ոչ լավ, ոչ վատ 6.Աղբահանության և սանիտարական մաքրման ծառայության համապատասխանությունը օրենսդրական պահանջներին, սահմանված նորմատիվներին, կարգերին և չափորոշիչներին - մասնակի 7.Աղբահանության ծառայության մատուցման հաճախականությունը՝	Տեղեկատվական աղբյուրներ Համայնքի ղեկավար, ՄԳ կիսամյակային և տարեկան հաշվետվություններ, բնակիչներ	Համայնքի ղեկավար, «Թումանյանի կոմունալ տնտեսություն» ՀՈԱԿ-ի տնօրեն, վարչական ղեկավարներ	2019թ. հունվար – 2019թ. դեկտեմբեր	Համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների անբավարարություն

	(ամսվա կտրվածքով) – 3 անգամ, 8.Սանիտարական մաքրման ծառայության մատուցման հաճախականությունը՝ (ամսվա կտրվածքով) – ըստ գրաֆիկ - ժամանակացույցի				
Միջոցառումներ (գործողություններ). 1.Աղբահանության և սանիտարական մաքրման սխեմայի, ժամանակացույցի կազմում և հաստատում 2.Աղբի տեղափոխում համայնքի աղբավայր			Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ). 1.Համայնքի բյուջեով նախատեսված ծախսեր՝ 300.0 հազ. դրամ, Ֆինանսավորման աղբյուրը՝ համայնքի բյուջեի միջոցներ		

3. Համայնքային գույքի կառավարման 2019 թ. ծրագիրը

Աղյուսակ 6. Համայնքի գույքի կառավարման 2019թ. ծրագիրը

Հ/հ	Գույքի անվանումը	Հասցեն կամ մակերևութային ծածկակոդը	Զբաղեցրած տարածքը/ մակերեսը (մ ²)	Վիճակի վերականգնումը	Պեխի կատարվող միջոցառումներ	Այլ բնութագրիչներ
1.	Համայնքապետարանի շենք և գույք	գ. Եղեգնուտ, 3-րդ փող. N 2	35քմ	վատ	համայնքի կողմից օգտագործման	
2.	ՀՈԱԿ-ի շենք և գույք	գ.Եղեգնուտ, 1-ին փող. N 3	420,0քմ	բավարար	համայնքի կողմից օգտագործման	
3.	Ներհամայնքային նշանակության փողոցներ և ճանապարհներ	գ. Եղեգնուտ	19կմ	բավարար	համայնքի կողմից օգտագործման	
4.	Աղբավայր	գ. Եղեգնուտ	250 քմ	վատ	համայնքի կողմից օգտագործման	
5.	Գերեզմանատներ	գ. Եղեգնուտ	2 հատ	բավարար	համայնքի կողմից օգտագործման	
6.	Անասնազոմ	գ. Եղեգնուտ	2 հատ	քանդված	չի օգտագործվում	
7.	Խմելու ջրի ջրամատակարարման ներհամայնքային համակարգ	գ. Եղեգնուտ	7 կմ	բավարար	համայնքի կողմից օգտագործման	
8.	Դպրոցի շենք	գ. Եղեգնուտ, 1-ին փող. N 7	1188 քմ	լավ	համայնքի կողմից օգտագործման	
9.	Բուժկետի շենք	գ.Եղեգնուտ, 1-ին փող. N 3	20 քմ	բավարար	համայնքի կողմից օգտագործման	
10.	Էներգետ.,կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների	գ.Եղեգնուտ	240.0 հազ. դրամ		վարձակալության	Կնքվել է պայմ. Վիվասել-ի հետ

	հողեր					
11.	Վարելահող	գ.Եղեգնուտ	118.35հա		-	-
12.	Խոտհարքներ	գ.Եղեգնուտ	160.86հա		-	-
13.	Արոտներ	գ.Եղեգնուտ	53.57հա		-	-
14.	Այգի	գ.Եղեգնուտ	6.50հա		-	-
15.	Այլ հողատեսքեր	գ.Եղեգնուտ	569.95		-	-

4. Համայնքի ՏԱՊ-ի ֆինանսավորման պլանը

Աղյուսակ 7. ՏԱՊ-ի ֆինանսավորման պլանը՝ ըստ համայնքի ղեկավարի լիազորությունների ոլորտների

Հ/հ	Ծրագրի անվանումը	Ծրագրի արժեքը (հազ. դրամ)	Ծրագրի ֆինանսավորման աղբյուրները				
			Համայնքի բյուջե	Պետական բյուջե	Դոնոր կազմակերպություններ	Համայնք-ՔՀ-ՄՀ համագործակցություն	Այլ աղբյուրներ
Ոլորտ 1. Ընդհանուր							
	2019 թվականին ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվել:						
Ոլորտ 2. Պաշտպանության կազմակերպում							
	2019 թվականին ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվել:	-	-	-	-	-	
Ոլորտ 3. Արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանություն և քաղաքացիական պաշտպանության կազմակերպում							
	20189թվականին ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվել:	-	-	-	-	-	
Ոլորտ 4. Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն							
1.	Եղեգնուտ համայնքում գազամատակարարման ցանցի ընդլայնում	700.0	700.0				
2.	Եղեգնուտ համայնքի փողոցներում լուսավորության կետերի անցկացում	2706.3	2706.3				
3.	Հանդիսությունների սրահի կահավորում	950.0	950.0				
Ընդամենը		4356.3	4356.3				

Ոլորտ 5. Հողօգտագործում							
	2019 թվականին ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվել:	-	-	-	-	-	-
Ոլորտ 6. Տրանսպորտ							
	2019 թվականին ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվել:						
Ոլորտ 7. Առևտուր և ծառայություններ							
	2019 թվականին ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվել:						
Ոլորտ 8. Կրթություն							
	2019 թվականին ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվել:						
Ոլորտ 9. Մշակույթ և երիտասարդության հետ տարվող աշխատանքներ							
	2019 թվականին ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվել:	-	-	-	-	-	-
Ոլորտ 10. Առողջապահություն							
	2019 թվականին ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվել:	-	-	-	-	-	-
Ոլորտ 11. Ֆիզիկական կուլտուրա և սպորտ							
	2019 թվականին ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվել:	-	-	-	-	-	-
Ոլորտ 12. Սոցիալական պաշտպանություն							
	Աջակցություն սոցիալապես անապահով ընտանիքներին	250.0	250.0				
Ընդամենը		250.0	250.0				
Ոլորտ 13. Գյուղատնտեսություն							
	2019 թվականին ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվել:	-	-	-	-	-	-
Ոլորտ 14. Անասնաբուծություն և բուսասանիտարիա							
	2019 թվականին ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվել:	-	-	-	-	-	-
Ոլորտ 15. Շրջակա միջավայրի պահպանություն							
1.	Համայնքի բոլոր բնակավայրերում աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների մատուցում	300.0	300.0				
Ընդամենը		300.0	300.0				
Ոլորտ 16. Զբոսաշրջություն							
	2019 թվականին ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվել:	-	-	-	-	-	-
Ոլորտ 17. Տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցություն							
	2019 թվականին ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվել:	-	-	-	-	-	-
Ընդհանուրը		4906.3	4906.3			-	-

5. Համայնքի ՏԱՊ-ի մոնիթորինգի և գնահատման պլանը

Ստորև ներկայացվում է ՏԱՊ-ում ներառված յուրաքանչյուր ոլորտային ծրագրի իրականացման արդյունքային ցուցանիշների մոնիթորինգի և գնահատման վերաբերյալ տեղեկատվությունը:

Աղյուսակ 8. Տեղեկատվություն համայնքի ՏԱՊ-ում ներառված ծրագրերի արդյունքային ցուցանիշների մոնիթորինգի և գնահատման վերաբերյալ

Ոլորտ 4. Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն					
Ծրագիր 1. Եղեգնուտ համայնքում գազամատակարարման ցանցի ընդլայնում					
Արդյունքային ցուցանիշները		2019 թ., 1-ին կիսամյակ/տարեկան			
Տեսակը	Անվանումը	Թիրախ. արժեքը	Փաստ. արժեքը	Շեղումը	Մեկնաբանություն
Մուտքային	Եղեգնուտ համայնքում գազամատակարարման ցանցի ընդլայնում	ըստ գույքագրման ցուցակի			
	Նախագծա-նախահաշվային փաստաթղթեր	1			
Ելքային (որակական)	Բնակիչների կարծիքը գազամատակարարման վերաբերյալ	բավականին լավ			
Ելքային (ժամկետայնության)	Ծրագրի իրականացման ժամկետը, ամիս	8			
Վերջնական արդյունքի	Բարելավվել է Եղեգնուտ համայնքի բնակչության կենցաղային պայմանները, բնակչության մի մասը ապահովվել է բնական գազով:	առկա է			
Ծախսեր, հազ. դրամ	Ֆինանսավորման աղբյուրը՝ համայնքի բյուջեի միջոցներ	700.0			

Ոլորտ 4. Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն					
Ծրագիր 2. Համայնքի փողոցներում լուսավորության կետերի անցկացում					
Արդյունքային ցուցանիշները		2019 թ., 1-ին կիսամյակ/տարեկան			
Տեսակը	Անվանումը	Թիրախ. արժեքը	Փաստ. արժեքը	Շեղումը	Մեկնաբանություն
	Համայնքային փողոցներում լուսավորման կետերի ավելացում	10կետ			
Մուտքային	Ծրագրի իրականացման հարցերով զբաղվող աշխատակազմի աշխատակիցներ	2			
	Նախագծա-նախահաշվային փաստաթղթեր	1			

Ելքային (քանակական)	Համայնքային փողոցներում լուսավորման կետերի ավելացում	10կետ			
Ելքային (որակական)	Բնակիչների կարծիքը լուսավորված փողոցների վերաբերյալ	լավ			
Ելքային (ժամկետայնության)	Ծրագրի իրականացման ժամկետը, տարի	1			
Վերջնական արդյունքի	Համայնքային փողոցներում լուսավորման կետերի ավելացում	10կետ			
Ծախսեր, հազ. դրամ	Ֆինանսավորման աղբյուրը՝ համայնքի բյուջեի միջոցներ	2706.3			

Ոլորտ 4. Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն					
Ծրագիր 2. Համայնքում հանդիսությունների սրահի կահավորում					
Արդյունքային ցուցանիշները		2019 թ., 1-ին կիսամյակ/տարեկան			
Տեսակը	Անվանումը	Թիրախ. արժեքը	Փաստ. արժեքը	Շեղումը	Մեկնաբանություն
	Համայնքում հանդիսությունների սրահի կահավորում	1			
Մուտքային	Ծրագրի իրականացման հարցերով զբաղվող աշխատակազմի աշխատակիցներ	2			
	Նախագծա-նախահաշվային փաստաթղթեր	1			
Ելքային (քանակական)	Կահավորված հանդիսությունների ժամանակակից սրահ	1			
Ելքային (որակական)	Բնակիչների կարծիքը հանդիսությունների սրահի վերաբերյալ	լավ			
Ելքային (ժամկետայնության)	Ծրագրի իրականացման ժամկետը, տարի	1			
Վերջնական արդյունքի	Կահավորված հանդիսությունների ժամանակակից սրահ	1			
Ծախսեր, հազ. դրամ	Ֆինանսավորման աղբյուրը՝ համայնքի	950.0			

	բյուջեի միջոցներ				
--	------------------	--	--	--	--

Ոլորտ 12.Սոցիալական պաշտպանություն					
Ծրագիր 1. Աջակցություն սոցիալապես անապահով ընտանիքներին					
Արդյունքային ցուցանիշները		2019 թ., 1-ին կիսամյակ/տարեկան			
Տեսակը	Անվանումը	Թիրախ. արժեքը	Փաստ. արժեքը	Շեղումը	Մեկնաբանություն
Մուտքային	Սոցիալական աջակցության հարցերով զբաղվող աշխատակիցներ	1			
Ելքային (քանակական)	Սոցիալական աջակցություն ստացած սոցիալապես խոցելի ընտանիքների թիվը	20			
	Սոցիալական աջակցություն ստանալու դիմումների քանակը ներկայացրածների թիվը	18			
	Սոցիալական աջակցություն ստացած հաշմանդամների թիվը	2			
Ելքային (որակական)	Բնակչության կարծիքը սոցիալական աջակցության ծառայության մատուցման հասցեականության մասին	միջին՝ ոչ լավ, ոչ վատ			
Ելքային (ժամկետայնության)	Ծրագրի իրականացման ժամկետը, տարի	1			
Վերջնական արդյունքի	Բարելավվել է սոցիալապես անապահով ընտանիքներին տրամադրվող սոցիալական աջակցության հասցեականությունը և ծառայության մատչելիությունը	բավականին լավ			
Ծախսեր, հազ. դրամ	Ֆինանսավորման աղբյուրը՝ համայնքի բյուջեի միջոցներ	250.0			

Ոլորտ 15. Շրջակա միջավայրի պահպանություն					
Ծրագիր 1. Համայնքի բոլոր բնակավայրերում աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների մատուցում					
Արդյունքային ցուցանիշները		2019 թ., 1-ին կիսամյակ/տարեկան			
Տեսակը	Անվանումը	Թիրախ. արժեքը	Փաստ. արժեքը	Շեղումը	Մեկնաբանություն
Մուտքային	Կազմակերպել համայնքի բնակչության աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների մատուցումը				
Ելքային (քանակական)	Աղբահանություն և սանիտարական մաքրում իրականացնող աշխատակիցների թիվը	1			
	Աղբամանների թիվը	5			
	Աղբահանության համար գանձվող վճարի չափը, դրամ	30			
	Համայնքում իրականացված աղբահանության ծավալը՝ տարեկան կտրվածքով, տոննա	5			
Ելքային (որակական)	Բնակիչների կարծիքը աղբահանության և սանիտարական մաքրման ծառայության վերաբերյալ	միջին՝ ոչ լավ, ոչ վատ			
	Աղբահանության և սանիտարական մաքրման ծառայության համապատասխանությունը օրենսդրական պահանջներին, սահմանված նորմատիվներին, կարգերին և չափորոշիչներին	մասնակի			
Ելքային	Աղբահանության ծառայության	3անգամ			

(Ժամկետայնության)	մատուցման հաճախականությունը՝ (ամսվա կտրվածքով)				
	Սանիտարական մաքրման ծառայության մատուցման հաճախականությունը՝ (ամսվա կտրվածքով)	ըստ գրաֆիկ-ժամանակացույցի			
Վերջնական արդյունքի	Համայնքի բնակիչների բավարարվածությունը մատուցված աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունից	ավելի շատ լավ, քան վատ			
Ծախսեր, հազ. դրամ	Ֆինանսավորման աղբյուրը՝ համայնքի բյուջեի միջոցներ	300.0			